

**ՈՌՈՂԻՉ ՋՐԻՑ ՈՎԴԻՈՆՈՒԿԼԻԴՆԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺԸ ՄՇԱԿԱՐՈՒՅՍԵՐԻ ՄԵՋ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱԿԱՅԱՆԻ ՇՐՋԱԿԱ ՏԱՐԱԾՔՈՒՄ**

ՀՀ ԳԱՍ Գ.Ս. Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների հիմնախումբ

Հայտնի է, որ ոռոգիչ ջրից բույսերի մեջ ռադիոնուկլիդների (^{90}Sr , ^{137}Cs) տեղաշարժվող քանակը գլխավորապես կախված է մշակաբույսերի կենսաբանական առանձնահատկություններից, ջրման ձևից, ոռոգման ռեժիմից, ոռոգիչ ջրի քիմիական կազմից և հանքայնացումից: Հայկական ատոմային էլեկտրակայանի (ՀԱԷԿ) հարակից տարածքում, Արարատյան դաշտի չոր և շոգ պայմաններում, գորշ կարբոնատային հողերի վրա մշակված և Մեծամոր գետի ջրով ոռոգված մի քանի մշակաբույսերի (նեխուր (*Apium* L.), սամիթ (*Anethum* L.), կանաչ սոխ (*Allium* L.), ամսաբողկ (*Raphanus* L.), ձմերուկ (*Citrus edulis* Pang.) համար միայն ոռոգիչ ջրից ^{90}Sr -ի և ^{137}Cs -ի տեղաշարժի չափի համեմատական քանակական բնութագիրը կազմելու համար, մեր կողմից հաշվարկվել են անցման գործակիցները (ԱԳ), (Բք/կգ:Բք/մ²): Հաշվարկի համար օգտագործվել են Արարատյան դաշտի հողակլիմայական պայմաններում մշված բուսատեսակների համար ընդունված ոռոգման նորմաների, ոռոգիչ ջրերում, մշակաբույսերում ^{90}Sr -ի, ^{137}Cs -ի պարունակության միջին տվյալները: Ըստ ոռոգիչ ջրից ^{90}Sr -ի ԱԳ-ի մեծության, մշակաբույսերը կազմում են հետևյալ շարքը՝ նեխուր (0,07) < կանաչ սոխ (0,08) < սամիթ (0,12) < ամսաբողկ (0,2) < ձմերուկ (0,77), իսկ ըստ ^{137}Cs -ի՝ կանաչ սոխ (0,16) < սամիթ (0,22) < նեխուր (0,26) < ամսաբողկ (0,61) < ձմերուկ (0,83): Ակներև է, որ ոռոգիչ ջրից ^{137}Cs -ի տեղաշարժը գերակշռել է ^{90}Sr -ի տեղաշարժին: Ձմերուկը ^{90}Sr -ի (3,6-10,4 անգամ) և ^{137}Cs -ի (1,4-5,1 անգամ) ԱԳ-ի արժեքներով գերազանցել է մյուս մշակաբույսերին: Թեև նեխուրը, սամիթը և ամսաբողկը ^{137}Cs -ի ԱԳ-ով զիջել են ձմերուկին, սակայն ^{137}Cs -ի պարունակությամբ (համապատասխանաբար, 11,8; 10,1; 10,5 Բք/կգ) գերազանցել են ձմերուկին (8,5 Բք/կգ): Ըստ երևույթին, դա տեղի է ունեցել հողից դրանց կլանման հաշվին: Այդ մասին են վկայում կենսաբանական կլանման գործակիցների (ԿԿԳ) համեմատումը. ձմերուկում ^{137}Cs -ի ԿԿԳ-ը փոքր է, սամիթի, նեխուրի, ամսաբողկի ԿԿԳ-ից:

Եզրակացություն: ՀԱԷԿ-ի հարակից տարածքում ոռոգիչ ջրից մշակաբույսերի մեջ ^{90}Sr -ի և ^{137}Cs -ի տեղաշարժվող քանակի նվազեցման և ռադիոէկոլոգիապես առավել մաքուր գյուղատնտեսական մթերքների ստացման համար, պետք է կիրառել մշակաբույսերի ոռոգման ցածր ռեժիմ և նախընտրելով չորադիմացկուն մշակաբույսեր:

Ghalachyan L.M., Avetisyan M.M., Tadevosyan L.S.

**MIGRATION OF RADIONUCLIDES FROM IRRIGATION WATER TO PLANTS IN THE
AMBIENT AREA OF ARMENIAN NUCLEAR POWER PLANT**

G.S. Davtyan Institute of Hydroponics Problems, NAS RA

Summary

Transitional coefficient (TC) of ^{90}Sr and ^{137}Cs in plants celery - *Apium* L., fennel-*Anethum* L., green onion - *Allium* L., radish - *Raphanus* L., watermelon - *Citrus edulis* Pang) in the ambient area of ANPP has been calculated. According to the amount of ^{90}Sr TC plants are of the following line: celery < green onion < fennel < radish < watermelon, but according to ^{137}Cs TC: green onion < fennel < celery < radish < watermelon. Cultivation of draught-resistant plants and low irrigation regime is preferable for radioecologically agricultural product.